«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-ռուսական համալսարանի գիտական գծով
պրոռեկտոր, փ.գ.դ., պրոֆեսոր Պ.Ս. Ավետիսյան
« 01 » փետրվար 2020թ.

ԿԱՐԾԻՔ

Հայ-ռուսական համալսարանի
(առաջատար կազմակերպության)

Նանե Գառնիկի Սահակյանի «Պետական գնումների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք – (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն) միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնը՝ մասնակցությամբ ի.գ.թ., դոցենտ Ա.Գ. Թունյան, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Գ. Դավթյանի, ի.գ.թ. Ա.Ա. Մանուկյանի, ի.գ.թ. Կ.Մ. Հովհաննիսյանի, ի.գ.թ. Ա.Գ. Մալխասյանի, ի.գ.թ. Յ.Վ. Հայրապետյանի, ի.գ.թ. Ե.Ռ. Դանիելյանի, ի.գ.թ. Ն.Գ. Դավթյանի, ի.գ.թ. Մ.Ա. Քալաշյանի, ավագ դասախոս Օ.Ա. Հովհաննիսյանի քննարկեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Նանե Գառնիկի Սահակյանի՝ «Պետական գնումների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.03 Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Նանե Գառնիկի Սահակյանի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում չափազանց արդիական և քաղաքացիական իրավունքի տեսության ու պրակտիկայի կարևորագույն հիմնախնդիրներից մեկի՝ պետական գնումների

իրավահարաբերությունների ոլորտի իրավական կարգավորման էության, առանցքային հասկացությունների և առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Քննարկվող ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների ոլորտի ընդլայնմամբ և պետական գնումների գործարքների թվի աճով: Պետական գնումների ընթացակարգով պետական և համայնքային կարիքների բավարարման նպատակով ձեռք են բերվում ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ և ծախսվում են հանրային միջոցները: Հետևաբար, մշտապես օրակարգային պետք է համարել գնումների օրենսդրության կատարելագործումը:

Պետական գնումների իրավական հարաբերությունների ուսումնասիրությունը հատկապես կարևոր են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության և գնումների օրենսդրության կատարելագործման անհրաժեշտության լույսի ներքո:

Հետազոտության իրավական հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, գնումները կանոնակարգող միջազգային իրավական ակտերը, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Գնումների մասին» օրենքը և այլ իրավական ակտեր:

Ատենախոսությունն ունի գիտականորեն հիմնավորված կառուցվածք՝ բաղկացած ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

Պաշտպանության ներկայացված ատենախոսության հիմնական նպատակն է պետական գնումների ոլորտի խորը և գիտական իմաստավորումը, դրանց ուսումնասիրությունը իրավակիրառար պրակտիկայում: Մասնավորապես, հեղինակը հետազոտական աշխատանքում նպատակադրվել է համալիր ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների իրավական կարգավորումների հիմնախնդիրները, ներկայացնել դրանց հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկներ: Նպատակի իրագործմամբ պայմանավորված խնդիրներն են՝ ուսումնասիրել պետական գնումների և պետական պատվերի հատկանիշները, պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի բնույթը, տարբերակիչ հատկանիշները, բացահայտել պետական գնումների գործընթացի մասնակիցների կարգավիճակը, նրանց շրջանակը, մասնակիցներին ներկայացվող պահանջները, հետազոտել մրցույթների անցկացման հիմնական առանձնահատկությունները, բացահայտել պետական գնումների իրավահարաբերությունների փուլերը՝ պայմանագրի կնքման կարգը և այդ պայմանագրի էական պայմանները, վեր հանել պետական գնումների գործընթացում առաջացող հիմնական օրենսդրական և գործնական խնդիրները, ձևավորել գործնական բնույթի առաջարկություններ:

Հարկ է փաստել, որ ատենախոսության հեղինակը հաջողությամբ իրագործել է իր առջև դրված խնդիրները: Բարձր գնահատականի են արժանի Նանե Սահակյանի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք անկասկած ապահովել են ատենախոսության գիտական նորույթը: Բացի այդ, հարկ է նշել, որ աշխատանքում տեղ գտած առաջարկությունների և հետևությունների ճնշող մեծամասնությունը հիմնավորված է և փաստարկված: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ հայրենական իրավաբանական գրականության շրջանակում պետական գնումների ինստիտուտը, առկա տեսական և գործնական հիմնախնդիրները համակողմանի վերլուծության չեն ենթարկվել: Ատենախոսության արժանիքներից պետք է համարել այն փաստը, որ հեղինակն անդրադարձել է ոչ միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլև գնումները կանոնակարգող միջազգային իրավական ակտերի, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի կարգավորումներին: Չափազանց արժեքավոր է գնումների գործընթացները համախմբելու և համատեղ գնման կառուցակարգ ներդնելու հեղինակի առաջարկությունը, որը հնարավոր կդարձնի համախմբել միջոցները և չծախսել ռեսուրսներ կազմակերպչական հարցերը կատարելու վրա: Չափազանց արժեքավոր է նաև հեղինակի այն դիտարկումը, որ պետական գնումների իրավահարաբերությունները կրում են համալիր բնույթ՝ կարգավորվելով հանրային իրավական և մասնավոր իրավական նորմերով: Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են կիրառվել օրինաստեղծ գործունեության և իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև պետական գնումների դասընթացների դասավանդման ժամանակ:

Հեղինակը հրապարակել է ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլող տասը հրապարակումներ, որոնք նույնպես վկայում են Նանե Սահակյանի մասնագիտական բարձր որակների մասին:

Արձանագրելով, որ հիրավի կատարվել է մեծածավալ և խորը գիտական վերլուծական աշխատանք, այնուհանդերձ առկա են որոշ դիտարկումներ և նկատառումներ, որոնց վրա հարկ ենք համարում հրավիրել հեղինակի ուշադրությունը.

1. Կարծում ենք, որ բավարար չափով հիմնավորված չէ հեղինակի ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ առաջարկությունը: Այսպես, հեղինակը (թեզ 1, էջ 11) նշում է, որ <<ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորումն ավելորդ ծանրաբեռնում է օրենսդրությունը, հակասություն ստեղծում ճյուղային օրենսդրության հետ>>, որից հետո առաջարկում է <<ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել փոփոխություն՝ նախատեսելով միայն մեկ՝ պետական կարիքների բավարարման համար պայմանագրի կնքման հնարավորություն>>: Հայտնի է, որ ձևավորված պրակտիկայի համաձայն Հայաստանի Հանրապետությունում գնումների գործընթացները, ներառյալ՝ գնման մրցույթները, գնման պայմանագրերի կնքումը, պայմանագրի

էական պայմանները կարգավորվում են <<Գնումների մասին>> օրենքով և Կառավարության 2017թ. 526-Ն որոշմամբ սահմանված դրույթներով, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիշատակված դրնույթները ընդհանրապես չեն կիրառվում: Հետևաբար, խնդրի առավել արմատական լուծումը կլինի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պետական կարիքների համար ապրանքների մատակարարման, պետական կարիքների համար կապալային աշխատանքների կատարման վերաբերյալ համապատասխան կարգավորումներն ուժը կորցրած ճանաչելը, քան թե փոփոխություններ առաջարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում՝ իմանալով, որ միևնույն է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխված դրույթները չեն կիրառվելու:

2. Կարծում ենք, որ վիճահարույց է հեղինակի այն առաջարկությունը (թեզ 4, էջ 12), որով առաջարկվում է մեկ անձից գնում կատարելու՝ <<եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը>> հիմքը փոխարինել <<եթե անհնար է գնման այլ ընթացակարգի կիրառումը>> հիմքով: Բազային միավորը հստակ ու չափելի ցուցիչ է մեկ անձից գնում կատարելու համար և հիմքեր չի ստեղծում տարաբնույթ մեկնաբանությունների, մեկ անձից գնման ընթացակարգ կիրառելու հիմնավորվածության վերաբերյալ, մինչդեռ առաջարկվող <<եթե անհնար է գնման այլ ընթացակարգի կիրառումը>> հիմքը՝ հնարավորություն կընձեռի առավել լայն հայեցողական մոտեցում դրսևորելու և որպես հետևանք՝ մրցակցությունը սահմանափակելու համար:

3. Հեղինակը իրավացիորեն նշում է, որ Հայաստանի Հանրապետությունում մինչ օրս ընդունվել են գնումների վերաբերյալ չորս օրենքներ, սակայն չի նշում, թե դրանք երբ են ընդունվել, որոնք են եղել գնումների մասին օրենքների փոփոխությունների պատճառները և, ընդհանրապես, ինչ զարգացման փուլեր է անցել պետական գնումների օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում: Կարծում ենք, որ անկախության նվաճումից հետո Հայաստանի Հանրապետության գնումների օրենսդրության պատմության համառոտ նկարագրությունը առավել կհարստացներ թեկնածուական ատենախոսությունը:

4. Կարծում ենք, որ վիճահարույց է հեղինակի այն թեզը, որով առաջարկվում է «պետական գնում» եզրույթի փոխարեն օգտագործել «պետական կարիքների բավարարում» եզրույթը: «Բավարարումը» դա վիճակ է, երբ պետական կարիքը համարվում է բավարարված, մինչդեռ «պետական գնում» ասելով առաջին հերթին նկատի ունենք գործընթաց, որի միջոցով բավարարվելու է պետական կարիքը:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները կրում են մասնակի բնույթ, պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ և բոլորովին չեն նվազեցնում թեկնածուական ատենախոսության արժանիքները:

Ելնելով վերոգրյալից, Հայ Ռուսական համալսարանի՝ Իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնը գտնում է, որ Նանե Գառնիկի Սահակյանի «Պետական գնումների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.03-«Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը ամբողջական գիտական հետազոտություն է, լիովին համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 10-րդ կետով թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի 2020 թ. փետրվարի 1-ի նիստում, արձանագրություն թիվ 11.

Հայ-ռուսական համալսարանի
քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ՝ ի.գ.թ., դոցենտ Ա.Գ. ԹՈՒՆՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Ի.Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝ Լ.Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ